

Վ Ա Ր Ք

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1965, ք. 8-10, էջ 206)

Ե.

ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԻՒՆ

ԵՒ ԱՆՈՐ ՅԱԶՈՐԴՈՂ ԴԵՊԲԵՐՈՒ
ԱՐՁԱԳԱՆԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ

Ս. Սահակի եւ Մաշտոցի կեանքի վերջին տասնամեակը՝ Հայաստանի քաղաքական ու եկեղեցական կեանքին համար յեզաշրջումի տարիներ եղան։ Քաղաքական զեպանի վրայ՝ հայկական թաղաւորութիւնը վերջնականապէս կը վերնար։ Իսկ եկեղեցական մարզին մէջ՝ հայ եկեղեցին դադարաւորապէս նոր աղբյուրութեան ու հոսանքի մը մէջ կը մտնէր, որ իր ազազայ զիմաղծի կազմաւորումին մէջ կարեւոր դեր պիտի ունենար։

428 թուականը Հայոց քաղաքական պատմութեան տխուր էջերէն մէկը կարելի է նկատել։ Հայ նախարարներու մեծամասնութիւնը, կամ լաւ եւս, պարսկական տէրներու խումբը միացան՝ պարսկական արքունիքին զիմում ընելու, որ այլ եւս վերջէն իրենց վրայէն հայ թաղաւորը, եւ անոր փոխարէն՝ պարսիկ մարզպան մը զըկէ։ Իրենց այս դադարաւոր ուղեցին մասնակից ընել նաեւ Ս. Սահակ կաթողիկոսը, որ յետ զուր տեղ խրատելու զիրենք՝ որ ետ կենան այդ դադարաւորէն, ինք զոհ զնաց նոյն նախարարներու ամբաստանութեան, եւ թաղաւորին հետ զրկուեցաւ իր կաթողիկոսական աթոռէն։ Քաղաքական այս կարեւոր անցուղար-

ձին չուրջ՝ ո՛չ մէկ ակնարկ կը գտնենք Կորիւնի պատմութեան մէջ։ Բայց, ինչպէս ըսինք արդէն, ասիկա առաջին եւ միակ զէպքը չէ, որու մասին լուրսեամբ կ'անցնի անիկա։ Եւ պատճառն ալ հասկընալի է. քանի որ Կորիւն մտադրած էր զրել իր երանելի վարդապետին վարքը, եւ ո՛չ թէ Ե. դարու քաղաքական կամ եկեղեցական պատմութիւնը։ Ընդհակառակն, Ս. Սորենացի եւ Ղազար Փարպեցի, երկու պատմիչներն են, որոնք մանրամասն տեղեկութիւններ կու տան այս անցուղարձերու մասին¹։

Սակայն Ակինեան՝ Կորիւնի այս լուրսեանէն կ'ուզէ հետեւցնել թէ Սորենացիի եւ Փարպեցիի պատմածները չէին կրնար իրականացած ըլլալ. «Ինչ որ կը պատմէ Կեղծ-Ղազար Փարպեցի, կը զրէ ան, Արտաշէսի անարժան վարքի մասին, չի կրնար հաստատուիլ ժամանակակից վկայի մը վկայութեամբ։ Ե. դարու առաջին կէտը չի կրնար նման երեւոյթ մը հանդուրժել իր մէջ։ Նախարարներու ըմբոստութիւնը թաղաւորին եւ կաթողիկոսին դէմ՝ անկարելի է մտածել այդ շրջանին, երբ կ'իշխէր ողբերգութիւն երկրին մէջ՝ Սահակի եւ Մաշտոցի հովանաւորութեան տակ, երբ հեռաւոր եւ մերձաւոր ընդառաջ կ'ելլէր վարդապետին, եւ անոր հրամանին կ'ենթարկուէր։ Եթէ Վառձապուհ

1. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Գ, զԷ. 63-66; Ղ. ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն Հայոց, Ա, ԺԳ-ԺԳ, էջ 57-81։

մանուկներ կը հաւաքէր, դպրոցներ կը բանար՝ զրականութեամբ մարդելու նոր սերունդը, իր ոգւո՞յն հանդէպ անտարբեր պիտի դառնէր թաղաւորը։ Կը համարեմ թէ Արտաշէս Սահակի հայրական դատարարութեան տակ առած էր իր կրթութիւնը. եւ իբր թաղաւոր նպաստած էր իր կարգին՝ զրականութեան զարգացման²։

Եթէ այս խորհրդածութիւնները պատմական արժէք ունենային, հարկ էր մերժել նաեւ Վարդանանց պատերազմի առթիւ եղած երկպառակութիւնը նախարարներու միջեւ։ Հոսով՝ Սահակի եւ Մաշտոցի զորքին ընթացք եւ քաջաբերութիւն տուող եղաւ Վառձապուհ թաղաւորը, որ այդ տեսակէտով պէտք է ներկատուի մեր զրականութեան մեկենասը, ինչպէս Օղոստոս կայսր՝ եղաւ Հռոմէական զրական ոսկեղարուն համար։ Նախարարներու մէջ՝ Սահակի եւ Մաշտոցի քաղաքական ուղղութեան հետեւողներն էին Մամիկոնեան տոհմը, Կամսարականները, Վահան Ամատունին, որոնք պարսկական արքունիքին առջեւ արդէն չնորհազուրկ էին, եւ Ս. Սահակի զիւանապետական միջամտութեամբ կրցան իրենց աջաւորին կամ կալուածներու վրայ հաստատուիլ՝ առանց ստանալու այն կարեւորութիւնը որ նախապէս ունէին։ Մինչ Ս. Սահակի եւ մնացեալ հայ նախարարներու միջեւ եղած տարակարծութեան հիմը քաղաքական երկու հոսանքներու գոյութեան վրայ հաստատուած էր, որ ոչ միայն Ե. դարու առաջին կէտին, այլ զայն կանխող եւ յաջորդող շրջաններուն ալ հայ նախարարները իրարու մէջ կը բաժնէր։ Պարսկասէր եւ բիւզանդասէր հոսանքներու գոյութիւնը ակնբախ երեւոյթ մըն է մեր պատմութեան մէջ։ Ս. Սահակ յայտնի կերպով ազգային անկախ քաղաքականութեան կողմն էր, իր յոյսը գնելով Բիւզանդիոնի կայսեր օժանդակութեան վրայ։ Եւ անոր համար խորհուրդ կու տար հայ նախարարներուն, որոնք եկած էին իր աջակցութիւնը ուղեւոր Արտաշէս թաղաւորի զահապրկման

համար. «Փոքր մի տանել թերութեան տուն, մինչեւ եւս իրացն խորհել մարթացուք կայսերին Յունաց Թէոդոսիւ, եւ ոչ անօրինաց մատնել ի ծաղր եւ յայպանումն»³։ Մինչ հայ նախարարներու մեծամասնութիւնը՝ այդ պահուն՝ պարսկական հոսանքին յարող էին եւ չուղեցին հետեւիլ Ս. Սահակի խորհուրդին։ Եւ մանաւանդ թէ զիմելով Տիգրան, ոչ միայն թաղաւորը ամբաստանեցին, այլ նաեւ իրենց Կաթողիկոսը իբրեւ «զՅունովք զըլեալ խորհրդով»⁴։ Սորենացիի այս շատ յարկի վկայութիւնը բոլորովին կ'անտեսէ Ակինեան, պարզապէս անոր համար որ Թ. դարու պատմիչ նկատելով զինքը՝ երբեք անոր վկայութիւնը նկատի չ'առնէր։ Սակայն ճիշտ Սորենացիի տեղեկութիւններն են որ մեր պատմութեան այս շրջանը լաւազոյն կերպով կը լուսաբանեն, ինչպէս աւելի առաջ երթալով պիտի տեսնենք։

Մենք Սորենացիի պատմութեան հետքերէն կ'իմանանք որ Ս. Սահակ Տիգրան կանչուելով, ուր իր կաթողիկոսական պաշտօնէն զրկուեցաւ, հոն մնացած է չուրջ չորս տարի, իբրեւ աքսորեալ մը։ Կը պատմէ Սորենացին, թէ հայ նախարարները Սահակի տեղ Սուրմալին տուին կաթողիկոսական պաշտօնը։ Բայց տարի մը ետք զինքն ալ աթոռէն զրկեցին ու տեղը՝ Վառձապուհ արքայէն ուրիշ մը խնդրեցին։ Վառձապուհ զրկեց Բրքիշոյ ասորիին։ Աս ալ երեք տարիէն անտանելի դարձաւ՝ իր թոյլ վարքովը։ Այս պարագային է որ, կ'ըսէ Պատմահայրը, նորի մը ընտրութեան համար՝ ոմանք կ'ուզէին Ս. Սահակը կանչել տալ, մինչ ուրիշներ պարսիկ արքային կ'ուզէին ձգել ընտրութիւնը։ Ուստի զանազան պատգամաւորութիւններ ներկայացան Վառձապուհին։ Վառձապուհ Սուրմալի Աւոյցայ Տէրը՝ Արքայից արքային կամքին կը ձգէին նոր

2. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա 1949, էջ 33-34. Աղբ. Մատ. ձԾԸ։

3. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Գ, 63։

4. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, անդ։

կաթողիկոսի մը նշանակումը: Մանէ՛ճ Աստուծոյն եւ Սպանդարտ Արշարունի կը խնդրէին որ Ս. Սահակ վերստին աթոռը զրաւէ: Մանաւանդ թէ Յունաց բաժնի Հայաստանի կառավարիչ Անատոլ սպա-յապետն ալ իր կողմէն պատգամաւոր զրկեց՝ խնդրելու որ Վառժ Ս. Սահակը իրեն մօտ զրկէ, որ նոյն բաժնի Հայոց կաթողիկոս ըլլայ: Հուսկ Ս. Մեսրոպ եւ եպիսկոպոսներու բազմութիւն մը Տիրուկ քահանան զրկեցին՝ որ Ս. Սահակը վերադարձնէ իր կաթողիկոսական աթոռը: Վառժ նկատի առնելով բոլոր այս պատգամաւորներու խնդրանքները, ամէնքը զոհացնելու եւ իր քաղաքականութիւնը առաջ տանելու նպատակով, կաթողիկոսական իշխանութիւնը երկուքի բաժնեց. եւ քաղաքական հանգամանք ունեցող իրաւասութեան պատասխանատուն կարգեց Շմուէլ ասորի մը. մինչ հոգեւոր իրաւասութեան վրայ՝ Ս. Սահակը: Խորենացի այս բաժանումը հետեւեալ ձևով կը նկարագրէ. Շմուէլ պիտի ընկերանար Մարգարանին եւ իրաւասու պիտի ըլլար հարկերու հաւաքման եւ դատաստանա-կան գործերու: Իսկ Ս. Սահակի համար կը զրէր. «Միայն իշխանութիւն ունիցի վարդապետութեան սովորական կրօնից եւ ձեռնադրութեան զայնոսիկ, զորոց եւ Շմուէլն յանձն առնուցու»⁵: Վառժ, յետ յանձնարարելու Ս. Սահակի որ հաւատա-րիմ մնայ պարսկական իշխանութեան՝ ուղեց զինք վարձատրել. բայց Ս. Սահակ մերժելով զբաժանական նուէրները, խնդրեց որ իր նախորդին ձեռքով հաստատուած Գահնամակի կարգը հաստատուն պահուի եւ Կամսարական ու Ամատունի տոհմե-րուն իրաւունքները վերահաստատուին: Սահակի խնդրանքները ընդունելի եղան եւ ան կրցաւ վերադառնալ Հայաստան ու քաջուկեցաւ Բագրեւանդ՝ իր կալուածնե-րուն մէջ բնակելու: Հոս է որ ան շարու-նակեց իր Թարգմանական գործը եւ ա-շակերաններուն համար եղաւ քաջալեր ու առաջնորդ:

5. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, 65:

ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԱԾ

Պատմական այս վերջին տասնամեա-կին՝ ընդհանուր Եկեղեցւոյ պատմու-թեան մէջ շատ կարեւոր դէպք մը պատա-հեցաւ, որ հայ Եկեղեցւոյ համար ալ իր նշանակութիւնը ունեցաւ: Տիեզերական Գ. Ժողովքն էր ան, զուգարուած 431ին, Եփեսոսի մէջ: Թէեւ հայ Եկեղեցին չու-նեցաւ պաշտօնական ներկայացուցիչ, կամ լաւ եւս՝ չմասնակցեցաւ անոր, ինչ-պէս ընդհանրապէս եղած էր Նիկիոյ Ժո-ղովքին համար, այնուհանդերձ Ժողով-քէն անմիջապէս ետք, նոյն ինքն Ս. Սա-հակի կենդանութեան, հայ Եկեղեցին ա-ռանց վարանելու՝ ընդունեցաւ Ժողովին հեղինակութիւնը եւ կանոնները: Նշան՝ թէ Ժողովքի տիեզերականութեան ան-հրաժեշտ պայմանը էր նկատել իր պաշ-տօնական կամ գործօն մասնակցութիւնը:

Պատմական այս կարեւոր դէպքի մա-սին, Մ. Խորենացի հակիրճ՝ բայց ճշ-գրիտ նկարագրութիւնը կու տայ իր պատ-մութեան գրքին մէջ. «Ընդ այն ժամա-նակս, կը զրէ ան, եկաց յաթոռ եպիս-կոպոսութեան Բիւզանդացոց անարժա-նարար յաջորդեալ, ամբարիշտն Նեստոր եւ հրէական իմացմանց հետեւեալ՝ հայ-հոյեաց զամենատուրը Կոյսն մարգարէն լինել եւ ոչ աստուածամէն: Քանզի ծը-նեալն ի նմանէ առեալ սկիզբն, ա՛յլ որ-դի, ասէ, շնորհօք ի Մարիամայ, եւ ա՛յլ որդի ի Հօրէ յառաջ, որպէսդ լինել եր-կուս որդիս. որով երբորդութիւնն չոր-րորդութիւն լինի: Վասն որոյ Ժողովեալ քրդոց հարցն յԱսիա, ի ծովահայկացն Ե-փեսոս, զբաւորական վերձանութեամբ՝ Կելեստինոս Հռոմայ, Կիւրղոս Աղեքսան-դրացի, Յորնաղիոս Երուսաղեմի, Յով-հաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պապոս Էմեսոս, Թէոդոտիոս Անկիւ-րիայ, եւ այլ բազում, համանդամայն եր-կերիւր հարք, նորովեալ զՆեստոր, խոս-տովանեցին մի Որդի Աստուծոյ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ Աստուածամէն զա-մենատուրը Կոյսն Մարիամ»: Եւ կապե-լով մեր Եկեղեցւոյ պատմութեան հետ՝

կը շարունակէ. «Եւ վասն զի ոչ հանդի-պեցան յայնմ Ժողովի Մեծն Սահակ եւ Մեսրոպ, զրեն առ նոսա Կիւրղոս Աղեք-սանդրացի եւ Պրոկլոս Կոստանդնուպոլսի եւ Ակակ Մելիտինոյ եպիսկոպոսք, ըզ-դուչացնելով զնոսա...»⁶:

Այս բացայայտ վկայութեան քով՝ Կո-րին իր պատմութեան մէջ բոլորովին կողմնակի կերպով բացատրութիւն մը ունի, այնու որ կը յիշէ թէ Պոլիս զըր-կուած աշակերաները, վերադարձին, ի-րենց հետ բերին Ս. Գրքի եւ Ս. Հայրե-րու գործերուն հետ՝ Նիկիոյ եւ Եփեսոսի Ժողովքներուն կանոններն ալ:

Խորենացիի ուղղակի վկայութենէն եւ Կորինի լուրջութենէն կը հետեւի՝ թէ Եփե-սոսի Ժողովքին ներկայ չեղան կամ չմաս-նակցեցան հայ Եկեղեցւոյ եպիսկոպոս-ներ: Բայց այս բացակայութեան բացա-ռութիւնը ի՞նչ է արդեօք. կրնա՞նք մի-այն Թէոդոս կայսեր հապճեպով եւ նուա-զագոյն ազմուկով հարցը փակելու փոյ-թին վերադրել: Անշուշտ այս շարժառի-թէն մղուած էր Թէոդոս կայսր, երբ 430ի Նոյեմբեր 19ի հրաւէր նամակով, ուղ-ղուած արեւելքի բոլոր մետրապոլիտանե-րուն, կը յանձնարարէր որ հետեւին սա-կաւութիւ եպիսկոպոսներ բերեն: Հա-սա՛ւ արդեօք Թէոդոս կայսեր հրաւէրը նաեւ Ս. Սահակին: Պատմական ոչ մէկ բացայայտ վկայութիւն ունինք այս մա-սին. սակայն մեզի կը թուի թէ պատճառ մը չկար որ այսպիսի հրաւէր մը զրանար Թէոդոս, քանի որ լաւ յարաբերութիւն-ներու մէջ էին հայ Եկեղեցին եւ Բիւզան-դոնի արքունիքը, ինչպէս աեսանք Մաշ-տոցի Պոլիս ճաշարարհորդութեան առի-թով:

Սակայն եթէ նկատի առնուի պատմա-կան կացութիւնը Հայաստանի մէջ, որ քիչ առաջ Մ. Խորենացիի տեղեկութիւն-ներէն քաղեցինք, կրնանք լիով բացա-տրութիւն գտնել թէ ինչո՞ւ Ս. Սահակ չկրցաւ սեւէ ներկայացուցիչ մը զրկել Ե-փեսոս, ենթադրելով որ ինք ալ ստացած ըլլար մասնակցելու հրաւէրը: Ինչպէս ը-ւինք, այդ օրերուն Սահակ կա՛մ արքայի

մէջ էր, կա՛մ ալ հազիւ անկէ դարձած, եւ երկրին մէջ հակակաթողիկոս մը ու պարսիկ մարզպան մը կը հսկէին. եւ ինք ազատ չէր գործելու՝ ինչպէս պիտի ու-ղէր: Պատմական այս պարագաներու նը-կատողութիւնը շատ կարեւոր կը համա-րենք՝ բացատրելու համար ո՛չ միայն Ե-փեսոսի Ժողովքին մէջ հայոց մասնակ-ցութեան բացակայութիւնը, այլ նաեւ Կորինի պատմութեան մէջ ինչ ինչ դէպ-քերու մասին եղած քողարկեալ ակնարկ-ները կամ կամաւոր լուրջութիւնը: Նկատելի ուրիշ պարագայ մըն ալ այն է՝ որ Ժո-ղովքէն վերջն ալ անոր վճիռներու մասին պաշտօնական եւ ուղղակի ծանուցում մը չեղաւ հայ Եկեղեցւոյ. զոնէ պատմական ո՛չ մէկ ակնարկ ունինք այդ մասին: Խո-րենացիի ըսածները՝ կը հային Թէոդոս Մոպսուեստացիի զրուրթներէն խըն-գրին շուրջ, որոնց մասին քիչ յետոյ

ԵՊՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԱՌ. ՄԱՇՏՈՅ

Բարբախտաբար ունինք Եզնիկ Կող-բացիի նամակը գրած իր վարդապետին՝ Մաշտոցի, որ իսկական ծանուցադիր մըն է Եփեսոսի Ժողովքի վճիռներու մասին: Այս նամակին սկզբնական հատուածը պահուած է «Գիրք Թղթոց»ի սկիզբը, բայց բոլորովին անճանաչելի կերպով, քանի որ ան խառնուած է Պրոկլի առ Ս. Սահակ եւ Մաշտոց գրած նամակին հետ⁸: Բայց «Կնիք Հաւատոյ» հաւաքածոյին մէջ պահուած է նոյն հատուածէն մաս մը հետեւեալ վերնագրին տակ. «Ի Թղթոյն Եզնիկայ Կողբացւոյ Թարգմանչի, զոր զը-րեաց ի Կոստանդնուպոլիս առ երանելին Մաշտոց վարդապետ, յետ առաջնոյ Ժո-ղովքին Եփեսոսի, յորում լուծին ի պատ-ուոյ զՆեստոր Կոստանդնուպոլսի եպիս-կոպոս»⁹: Այս վերնագրէն արդէն կը նըշ-մարուի թէ Եզնիկի նամակը Եփեսոսի Ժո-ղովքին հետ կապ մը ունի. զոնէ ժամա-

6. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, 61:

7. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, անդ:

8. Գիրք Թղթոց, էջ 1:

9. Կնիք Հաւատոյ, էջ 130:

նակադրական կերպով անկէ ետք դըրուած է:

Սակայն անոր պարունակութեան քնննութիւնը լիով յոյց կու տայ թէ ամբողջապէս նոյն ժողովքին նուիրուած է այն: Եղնիկ իր այս նամակով, յետ յառաջաբանի մը, ուր իր երկար բացակայութեան մասին սրտառուջ խօսքեր կը չըռայէ, անմիջապէս կը ծանուցանէ «Նկեղեցիներու հաստատութեան մասին, զոր կարծեց խռովել մոլորութեան յանկարծախարոյց հովիւ, եւ որ քու սրբութեանդ ազօթքներով զաղբեցաւ եւ միաբանեցան հոռոմներու բոլոր եպիսկոպոսները՝ հաստատուն պահելու երեք հարիւրներու (այսինքն Նիկիոյ ժողովքին երեք հարիւր Հայրերու) հաւատքը, եւ նոյնք դրին որ ոչ ոք այլ եւս համարձակի նորածին եւ օտարոտի հաւատք առաջարկել, այլ անոր (Նիկիոյ հաւատքին) վրայ հիմնուել եւ զայն սորվեցնել»¹⁰: Թէ Եղնիկի այս խօսքերը կ'ակնարկեն Եփեսոսի ժողովքի որոշումներուն՝ շատ յայտնի է, մանաւանդ երբ համեմատենք զանոնք ժողովքի հետեւեալ որոշումին հետ: Վեցերորդ նիստին, դեմարտուած 22 Յուլիսին, «Ս. Ժողովքը որոշեց որ ոչ մէկ ուրիշ հաւատք (կամ հանդանակ) պէտք է դաւանիլ կամ շարադրել կամ դրել, բացի անկէ՝ որ Նիկիոյ սուրբ Հայրերու կողմէ որոշուեցաւ, որոնք Ս. Հոգիով հաւաքուած էին: Իսկ անոնք որ կը համարձակին ուրիշ հանդանակ դաւանիլ կամ շարադրել կամ դրել՝ անոնց համար որ հրէութենէ կամ հեթանոսութենէ կամ որեւէ աղանդէ կը զառնան զէպի ճշմարտութիւն ... թող նորովեալ ըլլան»¹¹: Յայտնի է ուրեմն թէ Եղնիկի խօսքերը ուղղակի ա'յս կանոնին կամ որոշումին կ'ակնարկեն: Նա-

10. Եղնիկի նամակին զանազան հատուածները հաւաքած ու հրատարակած է Հ. Ն. Ակի'նեԱն, տես Հանդ. Ամս. ԽԹ (1935), էջ 615-617. ու նաեւ իր Ս. Մաշտոց վարդապետ վերոյիշեալ գործին մէջ, էջ 221-225: Մէջբերումները այս վերջին գրքէն են:

11. Գործի ժողովոյն Եփեսոսի Յուլիս 22ին: Տես ՄԱՆՍԻ, Հտ. Դ, էջ 1362-2:

մակը որ Կ. Պոլսէն կը զրուէր՝ կ'ենթադրէ ոչ միայն ժողովքին լրացած ըլլալը, այլ նաեւ յետ ժողովքի եղած խռովութիւններուն զաղբիլը, Բիւզանդիոնի նոր եպիսկոպոսին Մաքսիմիանոսի ընտրութեամբ 431 Հոկտ. 25ին. ասով դռնէ Կոստանդնուպոլսոյ մէջ զաղար առին խռովութիւնները եւ եկեղեցիները հաստատուեցան: Բայց վերջնական խաղաղութիւնը տեղի պիտի ունենար 433ին, Անտիոքի եւ Աղեքսանդրիոյ պատրիարքներուն միջեւ զոյացած համաձայնութեամբ:

Ինչպէս ծանօթ է Եփեսոսի ժողովքին պատմութենէն, Տիեզերական Գ. Ժողովքը հանդարտութեամբ եւ խաղաղութեամբ շփեցաւ: Արդէն առաջին նիստերը տեղի ունեցան միայն Ս. Կիւրեղի եւ իր կողմնակիցներու ներկայութեան, եւ քաղաքին Յովհաննէս Անտիոքի պատրիարքը եւ իր եպիսկոպոսները ժամանած չէին Եփեսոս: Այդ առաջին նիստերուն է որ դատապարտուեցաւ Նեստոր եւ ընդունուեցաւ Աստուածածին տիտղոսը՝ Ս. Կոյսին համար: Անդին, Յովհաննէս իր կարգին, զուգարեց ուրիշ նիստ մը, իրեններով, ու դատապարտեց Կիւրեղ եւ անոր կողմնակիցները: Հուսկ հասան Հռոմի Պապին նուիրակները, որոնք իրենց ստացած հրահանգին համեմատ, Ս. Կիւրեղի կողմը բռնեցին եւ նոր նիստերով հաստատեցին եղած որոշումները ու անվաւեր հռչակեցին Յովհաննէսիները: Թէպէտ կայսրը տեղեկանալով անցուցարմին, Պոլիս կանչեց երկու կողմերէ կազմուած պատուիրակութիւն մը, հարցը անձամբ քննելու համար: Տեսնուեցաւ որ անհամաձայնութեան պատճառը Ս. Կիւրեղի առ Նեստոր դրած երկրորդ նամակն էր, ուր ան 12 նոյնքներով կը դատապարտէր Նեստորի վարդապետութիւնը: Անտիոքացիները կ'ուզէին այդ նոյնքներու դատապարտութիւնը, մինչ Կիւրեղեանները բոլորն ալ զաւտարան կը կանգնէին անոնց: Թէպէտ ստիպուեցաւ հարցը փակել՝ հրահանգ հանելով որ ամէն եպիսկոպոս իր աթոռը վերադառնայ. եւ Նեստորի դատապարտութիւնը կամ ա-

թոռէն զրկումը՝ իբր ընդունուած եղելութիւն նկատելով, անցաւ նորի մը ընտրութեան: 431ի Հոկտ. 25ին Պոլսոյ աթոռին համար Մաքսիմիանոս եպիսկոպոս օծուեցաւ:

Թէեւ ժողովքը փակուած՝ բայց հոգիները չէին խաղաղած: Բարեբախտաբար Ակակ Բերիացի ծերունի եպիսկոպոսին միջնորդութեամբ՝ Ս. Կիւրեղ եւ Յովհաննէս Անտիոքի պատրիարքը մօտեցան իրարու եւ համաձայնութիւն մը զոյացաւ 433ին: Երկու կողմերը որոշ զիջումներ ընելով՝ բանաձեւեցին հանդանակ մը, զոր կրնանք միութեան հանդանակ կոչել: Ս. Կիւրեղ կը հրաժարէր իր առ Նեստոր դրած նամակէն եւ 12 նոյնքներէն: Անտիոքեան զպրոցին անհաճոյ քանի մը եղբարանութիւններու փոխարէն, ինչպէս էին Քրիստոսի համար Ս. Կիւրեղի կիրարկած Մի բնութիւն, կամ Միացեալ բնութեամբ բացատրութիւնները, կ'ընդունուէր անտիոքեաններու առաջարկած Յերիւոյ բնութեանց միութիւն, կամ երկու բնութիւն Քրիստոսի մէջ եւ մէկ դէմք: Անդին Անտիոքացիները կ'ընդունէին Աստուածածին տիտղոսը Ս. Կոյսին համար, որ ժողովքին կարեւոր որոշումը եղած էր եւ զիստուր շարժառիթը՝ հաւաքման:

Արդ, Եղնիկ այս բոլոր անցուղարձերու տեղեկի պէտք էր ըլլար. որովհետեւ իր նամակին թիւ 1 հատուածին մէջ կը զրուէր բացատրութիւններ, որոնք մեզ կը մղեն ենթադրելու որ ան աչքի առջեւ ունեցած ըլլայ միութեան հանդանակը: Համեմատութիւն մը երկուքին միջեւ՝ կրնայ լաւագոյն կերպով յոյց տալ մեր հաւատաւը:

Միութեան հանդանակը կ'ըսէ. 1) Կը խոստովանինք որ Տէր մեր Յիսուս Քրիստոս, Աստուծոյ Միածին որդին, կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ, բանական հոգիով ու մարմնով: 2) Թէ ծնած է Հօրմէն, ժամանակներէն առաջ, ըստ աստուածութեան: 3) Թէ նոյնը, ժամանակներու վախճանին, մեզի համար ծնած է Ս. Կոյս Մարիամէն, ըստ մարդ-

կութեան: 4) Թէ նոյնը համագոյակից է Հօր՝ ըստ աստուածութեան, եւ համագոյակից մեզի՝ ըստ մարդկութեան: 5) Որովհետեւ երկու բնութիւնները միացած են, այդ պատճառով կը խոստովանինք մէկ Քրիստոս, մէկ Որդի, մէկ Տէր: 6) Ըստ այս անշփոք միութեան, Ս. Կոյսը կը դաւանինք Աստուածածին, քանի որ Աստուած Բան անկէ մարմնացաւ եւ մարդեղաւ եւ անկէ յղացած պահուն՝ իրեն միացուց տաճարը, զոր առաւ: 7) Իսկ ինչ որ Աւետարանի եւ Առաքելական բողոքերու մէջ կ'ըսուին Տիրոջ մասին, գիտենք թէ աստուածաբանները կը վերագրեն մէկ դէմքի (կամ անձի) ինչ որ հասարակաց է Քրիստոսի մէջ, իսկ ինչ որ կը բաժնէ՝ կը վերագրեն երկու բնութիւններու: Որով ինչ որ Աստուծոյ կը պատշաճի, Քրիստոստսի ըսուած ատեն՝ կը վերագրեն անոր աստուածութեան. իսկ ինչ որ խոնարհագոյն իրեր են՝ կը վերագրուին անոր մարդկութեան¹²:

Աչքի առջեւ ունենալով այս հանդանակը, կարգանք Եղնիկի նամակին շարունակութիւնը: 1) Խոստովանիլ Քրիստոսը ճշմարիտ Աստուած, Աստուծոյ Միածին որդին, 2) ծնած Հօրմէն, բոլոր արարածներէն առաջ, եւ Տէր ու արարիչ ամէն բանի: 3) Եւ նոյն Աստուած Բանը, ժամանակներու վախճանին, մարմին առած եւ մեզի համար մարդ եղած: 4) առանց փոխուելու կամ իյնալու կամ խախտելու իր աստուածային ինքնութենէն: 5) Եւ սուրբ Կոյսէն ծնած Աստուածը, ըստ մարմնաւոր ծնունդին (դաւանիլ) կատարեալ մարդ: 6) Եւ Կոյսը՝ Տիրածին եւ Աստուածածին կը կոչուի եւ է: 7) Եւ կատարեալ Աստուած՝ կ'ըսուի կատարեալ մարդ. վաճառի կատարեալ է անդամներով, եւ շունչով (այսինքն հոգիով) պատեց իր սուրբ մարմինը¹³:

12. TIXERONT, *Histoires des dogmes dans l'antiquité chrétienne*, Paris, 1922 t. III, p. 51 (cfr. MANSI, *Conc. ampl. Coll.* t. V, col. 305).

13. Թուրք եզնկայ, տես Ակի'նեԱնի Ս. Մաշտոց վարդապետ, էջ 221-2:

Եզնիկի նամակին թիւ 1 հատուածը այս անգին կ'ընդհատուի. այնպէս որ համեմատութեան համար միայն այսքանը կրնանք օգտագործել: Անշուշտ այս համեմատութիւնը պարզապէս զուգահեռներու նույնութիւնն է՝ որ ցոյց կու տայ, եւ ոչ թէ այդ հանդանակին թարգմանութիւնը: Կարելի է նաեւ մտածել թէ Եզնիկի նամակը որոշ աղաւաղում ալ կրած ըլլայ: Այս ամէնը նկատի առնելով՝ կրնանք համեմատութիւնը կատարել:

1) Պէտք է խոստովանիլ Քրիստոս մեր Տէրը, կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ: Եզնիկի քով ալ կան այս երկուքը, թէեւ իրարմէ անշատ կերպով (տե՛ս Եզ. 1 եւ 7 նախադասութիւնները):

2) Թէ Քրիստոս իրբեւ Աստուծոյ Միածին որդին, ծնած է բոլոր ժամանակներէ առաջ՝ ըստ աստուածութեան: Եզնիկի քով այս վերջին բացատրութիւնը չունինք, բայց մնացածը ճշտիւ կը համապատասխանէ (տե՛ս Եզնիկ թիւ 2):

3) Եւ թէ նոյնը, ժամանակներու վախճանին, մեզի համար ծնած է Ս. Կոյսէն՝ ըստ մարդկութեան: Հոս ալ Եզնիկի քով կը պակասի վերջին բացատրութիւնը, թէեւ աւելի ուշ զայն կը կիրարկէ: Բայց մընացեալը ճշտիւ կը համապատասխանէ (տե՛ս Եզն. թիւ 3):

4-5) Ասանց համապատասխանները չունինք Եզնիկի մօտ: Թէեւ Աստուծոյ հետ համապայկեցութեան զազափարը կ'արտայայտէ ան, երբ կ'ըսէ թէ «Նոյն Աստուած Բանը՝ մարդ եղաւ, առանց փոխուելու կամ իյնալու իր աստուածային ինքնութենէն» (տե՛ս Եզն. թիւ 3-4):

6) Այս միութեան համար՝ Ս. Կոյսը կը գտնանինք Աստուածածին: Եզնիկ քիչ մը տարբեր ձևով, բայց նոյն բանը կը հաստատէ թիւ 5-6-ի մէջ:

Իսկ թիւ 7-ի համապատասխանը չենք գտնիր Եզնիկի մօտ, որովհետեւ մեզի համար հատուածը կիսատ կը մնայ:

Այսքանով ալ, սակայն, կրնանք հետեւցնել կամ դէժ ենթադրել՝ թէ Եզնիկ իր նամակին շարադրութեան համար աչքի առջեւ ունեցած է Միութեան հանգանակը,

ու զայն ուղած է ներկայացնել իր վարդապետին: Ասով ինք սրաշածեական զեկուցադիր մը գրկած կ'ըլլայ Սուրբ Մեսրոպը՝ Եփեսոսի Ժողովքի բոլոր որոշումներու շուրջ: Ասկէ կը հետեւի նաեւ նամակի գրութեան թուականն ալ, զորն է մերձաւորապէս, այն է 433-ի վերջերք. քանի որ Միութեան հանդանակը շարադրութեամբ նոյն տարուան Օգոստոսին, եւ շուտով լուրը տարածուեցաւ ամէնուրեք, եւ անշուշտ ամէնէն առաջ Բիւզանդիոն, ուր ամէնէն աւելի հետաքրքրուած էին:

Եզնիկի նամակին մնացած մասէն ալ հաստատուններ հասած են: Ակինեանի հրատարակութեան մէջ թիւ 2 հատուածը, ստեղծած «կնիք Հաւատոյ»-էն, ամբողջապէս նուիրուած է Ս. Երրորդութեան վարդապետութեան: Թէ Երրորդութեան հարցը սերտօրէն կապուած է Մարդկութեան խորհուրդին, որուն մասին էր Եփեսոսի Ժողովքի մտահոգութիւնը, անկէ ալ յայտնի է, որ Նեստոր՝ Ակակ Մելիտինեցիի հետ խօսակցութեան մը պահուն, անոր առարկած է թէ Բանին մարդկութիւնը բացատրելով, ըստ Կիւրեղի, պէտք է հետեւցնել որ Հօր եւ Հօգւոյն աստուածութիւնն ալ միաժամանակ մարմնացած պէտք է ըլլայ: Ակակ այս առարկութեան չկրցաւ պատասխանել: Մինչ Եզնիկի տրուած յստակ բացատրութենէն՝ կրնայ քաղուիլ անոր Պատասխանը: Ան հաստատելով Երրորդութեան մէջ մէկ աստուածութիւն եւ երեք կատարեալ անձեր, կը շեշտէ անձերու զանազանութիւնը ըսելով. «Հօր անձը Որդւոյն անձը չէ, որովհետեւ իր անձին հայրը չէ ան: Նմանապէս Որդւոյն անձը՝ Հօր անձը չէ, քանի որ Որդին ալ իր անձին Որդին չէ, եւ ոչ ալ Հօգւոյն անձը՝ Հօր եւ Որդւոյն անձն է, քանի որ իր անձին Հօգին չէ, այլ Աստուծոյ Հօգին է»¹⁴: Եզնիկի նամակին թիւ 2 հատուածը այսքանով կը վերջանայ. բայց մեզի կը բուռն նշել թէ այս զանազանութենէն բնականօրէն կը հետեւի թէ Որդւոյն Աստուծոյ անձը մարմնանալով՝ Երրորդութեան

14. Թուրք եզնիկայ, անգ, էջ 223:

Թեան միւս անձերը կը մնային անփոփոխ: Հետեւաբար Երրորդութեան վարդապետութիւնը պէտք էր, Եզնիկին նամակին մէջ, կապ մը ունենար Բանին մարդկութեան հետ. դժբախտաբար կիսատ մնալուն համար, չենք գիտեր թէ Եզնիկ ինչ ձևով գրած էր այդ կապը:

Սակայն թիւ 3 հատուածը, ստեղծած Երուսաղէմի ձեռագրէ մը, որոշ չափով ցոյց կու տայ կապակցութիւն մը: Վասն զի հոն կ'ըսուի. «Բանն Աստուած մարդ զի հոն կ'ըսուի. «Բանն Աստուած մարդ եղած է առանց իր աստուածութենէն փոխուելու, եւ թէ իմաստուն է իր բաժնուելու, եւ թէ իմաստուն է իր բաժնուելու, եւ թէ իմաստուն է իր բաժնուելու»¹⁵: Յայտնի է թէ Եզնիկի վերջին խոսքը բացատրութիւնները ճշտիւ կ'արտայայտեն Մարդկութեան խորհուրդին ուղղափառ վարդապետութիւնը, թէեւ կը պակասի հոն տակաւին յստակ եզրաբանութիւնը՝ երկու բնութիւններու մէկ անձի մէջ միութեան: Բայց ասիկա տակաւին ճշտուած չէր ամբողջ եկեղեցւոյ մէջ: Եւ խոսնակութիւնը կամ չփոթութիւնը առաջ կու գար Աղեքսանդրեան եւ Անտիոքեան զարդաներու երկու տարբեր մտայնութիւններէն: Ակակ Մելիտինեցին, որ Ս. Կիւրեղի ջերմ հետեւորդներէն էր, այնքան մութ եւ չփոթ կերպով կ'արտայայտուի այս մասին, որ անոր ըսածները եթէ չուզենք մեկնել, Եւտիքեան սխալ վարդապետութեան նախադասութեան վարդապետութեան համար, ան ոչ սխալ հասկացողութեան համար, ան ոչ միայն չկրցաւ Նեստորի առարկութեան պատասխանել, այլ Ս. Սահակին ուղղած նամակին մէջ չառ մը անձիւն բացատրութիւններով կ'արտայայտուէր. «Զ մեզ կ'աւազատուեն, կ'ըսէ ան, քիչ իբրեւ Աստուած կը պաշտենք ան որ չարչարանքի

ենթակայ է: Բայց մենք ոչ միայն չենք ընդունիր ասոնց այս մտածութիւնը, այլ կը նկատենք ալ ան՝ որ համարձակած է ըսել քիչ Աստուած ի բնէ չարչարանքի ենթակայ է...»: Եւ քիչ մը անդին, թէ (Քրիստոս) «Զարչարանքի ենթարկուեցաւ ոչ լոկ մարդկութեամբ, այլ նաեւ աստուածութեամբ»¹⁶: Ակակ այս խօսքերը ցոյց կու տան յստակ եզրաբանութեան մը պակասը: Ըստ իր ըսածին, եթէ Քրիստոս իր աստուածութեամբ ալ չարչարանքի ենթարկուած ըլլար, Աստուած ի բնէ չարչարելի պէտք էր ըլլար, ինչ որ հակասելով ինքն իրեն՝ կը մերժէ ան: Վասնզի աստուածութիւնը՝ աստուածային բնութիւնն է, որ անչարչարելի է: Մինչդեռ աւելի ճիշտ էր ըսել. Քրիստոս՝ որ Աստուած էր՝ չարչարուեցաւ: Որովհետեւ աստուածութիւնը եւ մարդկութիւնը Քրիստոսի մէկ անձին մէջ միացած ըլլալով՝ մարդկային բնութեան պատշաճօղ բոլոր ստորոգելիները կրնան վերադրուիլ Աստուծոյ, իրբեւ զիստօր եւ միակ ենթակային: Եզնիկ առանց ունենալու այս եզրաբանութիւնը, ճիշտ կերպով կ'արտայայտուի երբ կ'ըսէ. «Յետ միաւորութեան Բանին ընդ մարմնոյն, ոչ ասի մարմին մարդոյ, այլ մարմին Աստուծոյ»¹⁷: Նոյն զազափարը աւելի ընդարձակօրէն կը բացատրէ թիւ 4 հատուածին մէջ, երբ կը գրէ. «Եւ հարկ է մարմինը իրբեւ իր մարմինը իմանալ եւ ոչ իրբեւ ունէ մէկու մը մարմինը, որ Բանին Աստուծոյ (չըլլայ), ինչպէս կը բանադուլէին Նեստոր եւ քանի մը ուրիշներ Արեւելցիներէն, այլ Բանին մարմինը եւ անոր տրիւնը թափուած աշխարհի փրկութեան համար: Վասնզի մարդու մարմինը աշխարհի քաղութիւն չի կրնար ըլլալ, այլ Աստուծոյ մարմինը»¹⁸: Այս բացատրութիւնը շատ կարեւորութիւն ունեցաւ հայ եկեղեցւոյ քրիստոսաբանական վէճերուն մէջ ընդդէմ երկարնակնե-

15. Թուրք եզնիկայ, անգ, էջ 224:

16. Գիրք Թուրք, էջ 15:

17. Թուրք եզնիկայ, անգ, էջ 225:

18. Թուրք եզնիկայ, անգ, էջ 225:

րուն. հայ աստուածաբանները միշտ կ'առարկէին անոնց՝ թէ «Մարգու մարմինը եւ արիւնը չի կրնար աշխարհի փրկութեան պատճառ ըլլալ»: Յաջորդ խօսքերուն մէջ ալ կը շարունակէ ըսել. «Եւ ոչ ալ ուրիշ մէկու մը կը պատկանին ծառայի կերպարանքը, որ իրը բրաւ, ինչպէս ուրիշ մէկու մը չէ աներեւոյթ պատկերը Աստուծոյ, որմէ ծնաւ. այլ պատկերն է անոր կերպարանքին: Եւ ոչ ալ տէրունական մարմինը, աստուածութեան եւ մարդկութեան միութեան հետք՝ պատահած արդէն իսկ ծնունդի պահուն Ս. Կոյսին արդանդին մէջ՝ կ'ըսուի մարմին մարդու, այլ՝ մարմին Աստուծոյ, զոր մարմնաւորներէն առաւ եւ անոր համար քառութիւն է բոլոր աշխարհի»¹⁹:

Ահա երկու բնութիւններու միութեան բացատրութիւններ, ճիշտ եւ ուղղափառ կերպով արտայայտուած, բայց առանց յստակ եզրաբանութեան մը: Եզնիկի նամակը ասով կը հանդիսանայ Եփեսոսի Ժողովքէն յետոյ առաջին վարդապետական կամ աստուածաբանական գրութիւնը հայ եկեղեցւոյ: Հոն Եփեսոսի վարդապետութիւնը կը բացատրէ Եզնիկի զգուշանալով կիրարկել Կիւրեղի առ Նեստոր գրած երկրորդ թուղթին բացատրութիւնները, ինչպէս էին՝ մի բնութիւն Բանին մարմնացելով, կամ բնութեամբ միացեալ. բացատրութիւններ, որոնք քիչ յետոյ մեր գրական արտադրութիւններուն մէջ պիտի սկսին երեւնալ. օրինակ, Գրիգորի վարդապետութեան մէջ, որ Ե. դարու արտադրութիւն է, կը կարդանք. «Քանզի միացաւ ի մարմնի բնութեամբ եւ խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութեանն»²⁰:

Եզնիկի այս զգուշաւորութիւնը կը բացատրուի անով՝ որ ան կը գրէր իր նամակը համաձայնութեան հանգանակի հրապարակութեանէն անմիջապէս ետք (433), երբ Ս. Կիւրեղ յանձն առած էր ետքաչել իր 12 նզովքներու նշանաւոր նամակը: Եզնիկ կը մնար որոշուած բանաձեւին վրայ, առանց Կիւրեղեան կամ Անտիոքեան կողմերէն մէկուն յարելու ամբողջապէս:

Իսկ եթէ հարց դնենք այժմ թէ ի՞նչ շարժումիւ ժողոված գրեց Եզնիկ իր նամակը, այսինքն ինքնիր կողմէն, թէ եկած հրաւերի մը վրայ, մեղի հաւանական կը թուի երկրորդ ենթադրութիւնը: Վասնզի 433ի վերջերս կամ 434ի սկիզբները, ինչպէս քիչ յետոյ պիտի ըսենք, Պոլիս կը հասնէին Ղեւոնդ եւ Կորիւն ու կը յարէին Եզնիկի²¹: Այս հանդիպման պահուն անոնք անշուշտ իրենց վարդապետին կողմէն գրաւոր կամ բերանացի հարցում ըրին եւ տեղեկութիւն ուղեցին այսքան երկար բացակայութեան շրջանին Եզնիկի կատարածներուն մասին: Եզնիկի նամակին յառաջաբանը, ուր ան երանի կու տայ անոնց որ ամէն օր կամ գէթ տարին անգամ մը գինքը (Մաշտոցը) տեսնելու առիթն ունին, ցոյց կու տայ թէ Եզնիկ երկար տարիներու ընթացքին չէ կրցած տեսնել իր վարդապետը: Այդ կ'անցնի մեզայի եւ կ'ըզձայ անոր ոտքը իշխալ, որժանանալու համար անոր ներման²²: Ո՞ր մեղքին համար արդեօք: Անշուշտ իր այսքան երկար բացակայութեան ատեն՝ որեւէ լուր մը չէր կրցած չըլլալուն: Սորենացիի պատմածը թէ Եզնիկ եւ Յովսէփ Եղեհիայէն Պոլիս անցած ըլլան՝ առանց հրամանի սպասելու իրմէն, վարդապետէն, կարծեմ պատմահօր մէկ ենթադրութիւնն է, հիմնուած Եզնիկի այս մեղադրական խօսքերուն վրայ, զոր ինքն ալ կարգացած էր: Այս յառաջաբանէն ետք եկող տեղեկութիւնները՝ Եփեսոսի Ժողովքի որոշումներուն մասին եւ համաձայնութեան հանգանակին վրայ, ինչպէս նաեւ վարդապետական ամբողջ բացատրութիւնը, կը մատնանէ թէ Եզնիկ պաշտօնապէս տեղեկագիր մը պատրաստած է՝ իր վարդապետին հրահանգին վրայ:

(Շար. 8)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

19. Թուրք Եզնիկայ, անդ, էջ 225:

20. Ա. Գ. Ա. Թ. Ա. Ն. Գ. Ե. Ո. Ս., Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1862, էջ 276:

21. ԿՈՐԻՒՆ, Վարդ Մաշտոցի, էջ 74:

22. Թուրք Եզնիկայ, անդ, էջ 221-2:

SERAIT-CE LA SOLUTION DE L'ENIGME DU LIVRE VI

DE FAUSTE DE BYZANCE?

Un jour que, recherchant pour le citer d'une façon exacte un passage de l'Histoire de Fauste de Byzance, je consultais la table des matières du VI^e livre, j'en lus machinalement la dernière phrase, ce qui fait que je la lus plus correctement qu'elle n'était écrite: Ստորոտ ամենայն պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան: «Fin de toute l'Histoire en ce qui concerne ma connaissance», c'est-à-dire «dans la mesure de ma connaissance», «pour autant que j'en sache». Puis, toujours aussi machinalement, je poursuivis ma lecture: Որք միանգամ ըզմատեանս ընթեռնոյք, տուք ..., et, là, je fus arrêté. Les mots suivants n'avaient aucun sens et je remarquai en même temps que, d'une part, je n'avais pas respecté la ponctuation de la première phrase, et d'autre part, j'avais mis en responsion à la deuxième personne du pluriel ընթեռնոյք un impératif de deuxième personne du pluriel տուք, qui n'était pas ce qui figurait dans le texte imprimé, celui-ci ne comportant aucun verbe pour la proposition principale, et, de plus, n'ayant aucun sens! Je supposai alors que տուք pouvait être le résultat d'une lecture erronée de l'abréviation de տւրհնութիւնս (ligature de Ս. et Բ. plus ՀՆՍ surmontés d'un patiw), et je me proposai de faire une vérification sur manuscrit lors de mon plus prochain passage à Venise. Je pus ainsi constater que trois des manuscrits donnaient տուք, mais qu'un quatrième, en

bolorgir, donnait l'impératif տուք que j'attendais. Par contre, tous donnaient bien տուս transcrit par ժ.

Allant de Venise à Munich, je fis au XXIV^e congrès orientaliste la communication que je publiai ensuite dans le Pazmaveb de Novembre-Décembre de la même année. (1957, pp. 282-284).

Mais cette phrase contenait encore deux mots: համարական թուօք, qui restaient inexplicables, la correction que je proposais ne me convaincant pas moi-même.

J'ai eu, depuis, la bonne fortune de pouvoir consulter les manuscrits du Maténadaran d'Erévan; sur quatre manuscrits qui contiennent ce passage, les deux plus anciens, le n^o 1867 de l'an 1622 et le n^o 3071 écrit de 1651 à 1661, donnent տուք; un troisième, de peu d'années postérieur, le n^o 4584, de l'an 1668, donne տուք; quant au quatrième, le n^o 1482, daté de 1678, il nous offre un blanc de quelques lignes après զմատեանս. Tous donnent ժ. après le mot տուք. Coïncidence extrêmement curieuse: l'ordre dans lequel je viens de présenter ces quatre manuscrits est rigoureusement chronologique! Tout se passe comme si, au cours d'une chaîne, les deux premiers copistes avaient respecté le texte qu'ils avaient sous les yeux malgré son incohérence, que le troisième eût voulu le corriger en mettant un substantif au pluriel devant տուս, et qu'enfin, le quatrième, voyant que la phrase était inin-